ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 օգոստոսի 2024 թվականի N 1012-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի վարչական տարածքում գտնվող 04-012-0026-0010 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Ապագա, Էջմիածնի խճուղի, 7/1 հասցե:
2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. օգոստոսի 27
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2024 թվականի N 1011-Ա

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԸ ԹՈՒՅԼ ՉՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N631-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ակնաշեն գյուղի Բաղրամյան փ., 1նրբ., 2տ. հասցեի բնակիչ Սենաբար Ժորայի Ասիրյանի /նույնականացման քարտ՝ 008289944, տրված՝ 25.11.2017թ. 006-ի կողմից/ 2024 թվականի օգոստոսի 09-ի դիմումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 20-ի N30 արձանագրությունը, երեխաների լավագույն շահերից ելնելով.

Որոշում եմ՝

1. Թույլ չտալ Սենաբար Ժորայի Ասիրյանին վաճառել իր անչափահաս երեխաներին՝ Լևոն Արթուրի Գևորգյանին /ծնվ.՝ 29.05.2015թ./, Թամարա Արթուրի Գևորգյանին / ծնվ.՝ 21.09.2018թ./,Ալեքս Արթուրի Գևորգյանին /ծնվ.՝ 21.09.2018թ./ համատեղ սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ակնաշեն գյուղի Բաղրամյան փողոց 1-ին նրբանցք 2տ. հասցեի բնակելի տունը / կադաստրային ծածկագիր՝ 04-005-0029-0021-002/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. օգոստոսի 26
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2024 թվականի N 1010-Ա

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԻԲԵԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 31–րդ հոդվածի 9–րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158–րդ, 161–րդ և 164–րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11–ի N 1384-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի 18.1–րդ կետը և Սարիբեկ Կարապետյանի 2024 թվականի օգոստոսի 26–ի դիմումը.

Որոշում եմ՝

1. Արաքս համայնքի Լուսագյուղ գյուղի վարչական ղեկավար Սարիբեկ Կարապետյանին տրամադրել 2024 թվականի ամենամյա արձակուրդն ամբողջությամբ՝ 24 աշխատանքային օր տևողությամբ, 2024 թվականի սեպտեմբերի 2–ից նույն թվականի հոկտեմբերի 3-ը ներառյալ:

2. Լուսագյուղ գյուղի վարչական ղեկավարի պարտականությունները ժամանակավորապես կատարող նշանակել Արաքս համայնքի Ապագա գյուղի վարչական ղեկավար Երեմ Պողոսյանին:

3. Սարիբեկ Կարապետյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի հոկտեմբերի 4–ից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. օգոստոսի 26
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2024 թվականի N 1009-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ակնաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող Աշոտ Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող 04-005-0007-0015 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Ակնաշեն, Հ. Թումանյան փողոց, 63 հասցե:
2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ. ՂԱՋԱՐՅԱՆ

2024թ. օգոստոսի 26
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2024 թվականի N 1008-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԵՐԵՆԻԿ ԶԱՎԵՆԻ ՄԱՅԻԼՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի բնակիչ Դերենիկ Զավենի Մայիլյանը /ծնվ. 1959թ./ դիմել է Արաքսի համայնքապետարան՝ Խորոնք գյուղի Հ.Շիրազի փողոց 11 հասցեում գտնվող, իրեն պատկանող / ըստ օրենքի ժառանգության վկայագրի՝ 2024թ-ի թիվ 717 սեղանամատյանի/ 0,15հա օրինական հողամասին կից ավել օգտագործվող 0.0131ա հողամասի և բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1328-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ բնակելի տունը և օժանդակ շենք շինությունները կառուցվել են մինչև 2001թվականի մայիսի 15-ը., հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի Հ.Շիրազի փողոց 11 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Դերենիկ Զավենի Մայիլյանի /ծնվ. 1959թ./, Արաքսի Զավենի Մայիլյանի ծնվ.1974թ./ գույքային իրավունքները՝ ճանաչել նրանց սեփականության իրավունքը 0,15հա օրինական հողամասին կից ավել օգտագործվող 0.0131 հա հողամասի և բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ՝ /բնակելի տուն՝ 171,8քմ կառուցված 1987թ, ծածկ՝ 54,6քմ կառուցված 1987թ,բնակելի տուն/նկուղ/՝ 47քմ կառուցված 1987թ, աստիճանավանդակ՝ 3,8քմ կառուցված 1987թ, օժանդակ

շինություն՝ 22,4քմ կառուցված 1987թ, տնտ. շինություն՝ 15,1քմ կառուցված 1987թ, ծածկ՝ 20.7քմ կառուցված 1987թ, թոնրատուն՝ 9,2քմ կառուցված 1996թ./, ջերմոց՝ 56,9քմ կառուցված 1996թ./,ջերմոց՝ 248,9քմ կառուցված 1996թ./, ջերմոց՝ 272,2քմ կառուցված 1996թ./,ջերմոց՝ 291,4քմ կառուցված 1996թ./պարիսպ՝ 7քմ կառուցված 1996թ./: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել ՀՀ ԿԱԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Դերենիկ Զավենի Մայիլյանի /ծնվ. 1959թ./, Արաքսի Զավենի Մայիլյանի ծնվ. 1974թ./, սեփականության իրավունքները սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի գրանցման վկայական:

4.Բնակելի տանը տալ Հայաստանի Հանրապետություն, Արաքս համայնք, գյուղ Խորոնք Հ.Շիրազի փողոց փողոց 11 հասցե:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. օգոստոսի 26
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2024 թվականի N 1007

ՍԱՐԳԻՍ ՄԱՋԻԹԻ ՄԻՐԶՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով սեփականատեր Սարգիս Մաջիթի Միրզոյանի 2024 թվականի օգոստոսի 16-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ գյուղի բնակիչներ Սարգիս Մաջիթի Միրզոյանին, Համլետ Մաջիթի Միրզոյանին, Ռոման Մաջիթի Միրզոյանին , Թինա Մրազի Միրզոյանին , Կարինե Համլետի Միրզոյանին սեփականության իրավունքով պատկանող /04-085-0045-0017/ ծածկագրով տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված 226,8քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 2,9քմ արտաքին մակերեսով զուգարանը, 2,8քմ մակերեսով արտաքին մակերեսով զուգարանը, 32,7 քմ արտաքին մակերեսով ծածկը, 0,8 քմ արտաքին մակերեսով պարիսպը ՝ համաձայն «Ավագ Ավագյան» Ա/Ձ-ի կողմից տրված շինությունների և հողամասի հատակագծերի և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 2024EP6BYV:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման համար վճարը կազմում է բնակելի նշանակության շինությունների 1քմ-ի համար 1209 Հայաստանի Հանրապետության դրամ, օժանդակ շինությունների 1քմ-ի համար 725,4 Հայաստանի Հանրապետության դրամ, 1209*226,8քմ=274201 /երկու հարյուր յոթանասունչորս հազար երկու հարյուր մեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ, 725,4*39,2քմ=28436 /քսանութ հազար

չորս հարյուր երեսունվեց/ Հայաստանի Հանրապետության դրամ: Ընդամենը՝ 274201+28436=302637 /երեք հարյուր երկու հազար վեց հարյուր երեսունյոթ/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Ինքնակամ կառուցված շենք-շինության օրինականացման համար հաշվարկված վճարը՝ 302637 Հայաստանի Հանրապետության դրամ գումարը պետք է վճարվի Ջրառատ գյուղի N900325182153 հաշվեհամարին:

4.Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրվա ընթացքում օրինականացնելու համար սահմանված վճարը չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. օգոստոսի 26
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2024 թվականի N 1006

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՐԳԻՍ ՄԱՋԻԹԻ ՄԻՐԶՈՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ գյուղի բնակիչ Սարգիս Մաջիթի Միրզոյանը /ծնվ. 1987թ./ դիմել է Արաքսի համայնքապետարան՝ Ջրառատ գյուղի Հ.Մկրտչյան փողոց 19 հասցեում գտնվող, իրեն պատկանող / ըստ օրենքի ժառանգության վկայագրի՝ 2023թ-ի թիվ 6996 սեղանամատյանի/ 0,2198հա օրինական հողամասի և բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հաշվի առնելով, որ բնակելի տունը և օժանդակ շենք շինությունները կառուցվել են մինչև 2001թվականի մայիսի 15-ը., հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ գյուղի Հ. Մկրտչյան փողոց 19 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Սարգիս Մաջիթի Միրզոյանի /ծնվ. 1987թ./, Համլետ Մաջիթի Միրզոյանի ծնվ.1971թ./, Ռոման Մաջիթի Միրզոյանի ծնվ.1985թ./, Թինա Մրազի Միրզոյանի ծնվ.1972թ./, Կարինե Համլետի Միրզոյանի ծնվ.1991թ./ գույքային իրավունքները՝ ճանաչել նրանց սեփականության իրավունքը 0,2198 հա օրինական հողամասի և բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ՝ /բնակելի տուն՝ 150,3քմ կառուցված 2001թ, ծածկած մուտք՝ 34,7քմ կառուցված 2001թ,բնակելի տուն՝ 127,3քմ կառուցված 2001թ, ծածկ՝ 6,1քմ կառուցված 2001թ, : Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել ՀՀ ԿԱԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Սարգիս Մաջիթի Միրզոյանի /ծնվ. 1987թ./, Համլետ Մաջիթի Միրզոյանի ծնվ. 1971թ./, Ռոման Մաջիթի Միրզոյանի ծնվ.1985թ./, Թինա Մրազի Միրզոյանի ծնվ. 1972թ./, Կարինե Համլետի Միրզոյանի ծնվ.1991թ./, սեփականության իրավունքները սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի գրանցման վկայական:

4.Բնակելի տանը տալ Հայաստանի Հանրապետություն, Արաքս համայնք, գյուղ Ջրառատ Հ.Մկրտչյան փողոց 19 հասցե:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. օգոստոսի 26
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2024 թվականի N 1005

ԱԳԻԹ ՔՅԱՐԱՄԻ ՍՄՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով սեփականատեր Ագիթ Սմոյանի 2024 թվականի օգոստոսի 13-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղի բնակիչներ Ագիթ Քյարամի Սմոյանին, Մամիխան Կուլիյի Սմոյանին,Աննա Ագիթի Սմոյանին,Մամե Ագիթի Սմոյանին սեփականության իրավունքով պատկանող /04-033-0106-0001/ ծածկագրով տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված 22,4քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, ինքնակամ բացված 1 դուռը և 2 պատուհանը՝ ընդամենը 3 միավոր՝ համաձայն «Ավագ Ավագյան» Ա/Ձ-ի կողմից տրված շինությունների և հողամասի հատակագծերի և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 20249STASU:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման համար վճարը կազմում է բնակելի նշանակության շինությունների 1քմ-ի համար 1422 Հայաստանի Հանրապետության դրամ, յուրաքանչյուր ձևափոխված դռան և պատուհանի համար 1422 Հայաստանի Հանրապետության դրամ. 1422*22,4քմ=31853 /երեսունմեկ հազար ութ հարյուր հիսուներեք / Հայաստանի Հանրապետության դրամ, 1422*3=4266 /չորս հազար երկու հարյուր վաթսունվեց/ Հայաստանի Հանրապետության դրամ: Ընդամենը՝ 31853+4266=36119 /երեսունվեց հազար մեկ հարյուր տասնինը/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Ինքնակամ կառուցված շենք-շինության օրինականացման համար հաշվարկված վճարը՝ 36119 Հայաստանի Հանրապետության դրամ գումարը պետք է վճարվի Գայ գյուղի N900325165158 հաշվեհամարին:

4.Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրվա ընթացքում օրինականացնելու համար սահմանված վճարը չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. օգոստոսի 26

Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2024 թվականի N 1004-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1–ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 13-ի N 174-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1–ին կետի 9–րդ ենթակետը և Ա/Ձ Քրիստինե Մաթևոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Թույլատրել Ա/Ձ Քրիստինե Մաթևոսյանին Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի վարչական տարածքում 2024 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակներին վաճառել ոգելից խմիչքներ և ծխախոտային արտադրատեսակներ:

2.Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 13–ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 174-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1–ին կետի 9–րդ ենթակետի համաձայն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. օգոստոսի 26
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2024 թվականի N 1003-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1–ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 13–ի N 174-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1–ին կետի 9–րդ ենթակետը և Ա/Ձ Վոլոդյա Հովհաննիսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Թույլատրել Ա/Ձ Վոլոդյա Հովհաննիսյանին Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի վարչական տարածքում 2024 թվականի 3-րդ եռամսյակին վաճառել ոգելից խմիչքներ և ծխախոտային արտադրատեսակներ:

2.Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 13–ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 174-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1–ին կետի 9–րդ ենթակետի համաձայն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. օգոստոսի 26
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2024 թվականի N 1002-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38–րդ հոդվածի 1–ին մասի 7–րդ կետով, Արաքս համայնքի Ջրառատ գյուղի սեփականությունը հանդիսացող 0.8769 հա հողամասի /ծածկագիր՝ 04-085-0245-0029, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսք/ պետական տուրքի և պետական գրանցման համար գումար փոխանցելու նպատակով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի բյուջեի 01.1.1–ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 1.000 (մեկ հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900005016176 հաշվեհամարին:

2. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի բյուջեի 01.1.1–ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 2.000 (երկու հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900013220018 հաշվեհամարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. օգոստոսի 26
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2024 թվականի N 1001-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38–րդ հոդվածի 1–ին մասի 7–րդ կետով, Արաքս համայնքի Ջրառատ գյուղի սեփականությունը հանդիսացող 2.0216 հա հողամասի /ծածկագիր՝ 04-085-0245-0008, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող/ պետական տուրքի և պետական գրանցման համար գումար փոխանցելու նպատակով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի բյուջեի 01.1.1–ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 1.000 (մեկ հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900005016176 հաշվեհամարին:

2. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի բյուջեի 01.1.1–ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 2.000 (երկու հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900013220018 հաշվեհամարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. օգոստոսի 26
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2024 թվականի N 1000-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35–րդ հոդվածի 1–ին մասի 22–րդ և 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29–ի N 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով ՀՀ Արմավիրի մարզի, Արաքս համայնքի, Գայ գյուղի բնակիչ՝ Լուսիկ Գրիգորյանի դիմումը իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ «Ավագ Ավագյան Գագիկի» ԱՁ / վկայական 0331/ 2024 թվականի օգոստոսի 15-ի կատարված չափագրությունը/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղի վարչական տարածքում գտնվող Լուսիկ Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող 04-033-0031-0003 կադաստրային ծածկագրով անշարժ գույքից առանձնացված 0.0481 հա մակերեսով մասին տրամադրել ՀՀ Արմավիրի մարզ, Արաքս համայքն գյուղ Գայ, 1-ին փողոց, 3/1, 0.1222 հա մակերեսով մասին տրամադրել ՀՀ Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Գայ, 1-ին փողոց, 3 հասցե:
2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. օգոստոսի 26
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 օգոստոսի 2024 թվականի N 999-Ա

ԱՆՉԱՓԱՀԱՍԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N631-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի Էջմիածնի խճուղի 36 տան բնակիչ Դավիթ Մուրադի Բաղդասարյանի /անձնագիր՝ AT0287003, տրված՝ 21.08.2019թ. 057-ի կողմից/ 2024 թվականի օգոստոսի 09-ի դիմումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 20-ի N29 արձանագրությունը.

Որոշում եմ՝

1. Թույլատրել Դավիթ Մուրադի Բաղդասարյանին վաճառել իր անչափահաս որդուն՝ Մուրադ Դավիթի Բաղդասարյանին /ծնվ.՝ 09.09.2013թ./ , 1/5-րդ բաժնային մասով սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի 04-012-0150-0019 կադաստրային ծածկագրով, 0.5878 հա մակերեսով հողամասը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. օգոստոսի 23
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 օգոստոսի 2024 թվականի N 998-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38–րդ հոդվածի 1–ին մասի 7–րդ կետով, սպորտային ապրանքներ ձեռք բերելու նպատակով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի բյուջեի 8.1.1–ի (սպորտային միջոցառումներ) 4269 հոդվածից հատկացնել 36.000 (երեսունվեց հազար) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. օգոստոսի 22
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 օգոստոսի 2024 թվականի N 997-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38–րդ հոդվածի 1–ին մասի 7–րդ կետով, Արաքս համայնքում Սբ. Մարիամ Աստվածածնի վերափոխման տոնի առթիվ միջոցառումների կազմակերպման նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի բյուջեի 8.2.4–ի (այլ մշակութային կազմակերպություններ)՝ 4239 հոդվածից հատկացնել 576.000 (հինգ հարյուր յոթանասունվեց հազար) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. օգոստոսի 22
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 օգոստոսի 2024 թվականի N 996-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ գյուղի վարչական տարածքում գտնվող 04-085-0049-0009 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Ջրառատ, Լուսագյուղի խճուղի, 1 հասցե:
2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. օգոստոսի 22
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 օգոստոսի 2024 թվականի N 995-Ա

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԵԾԱՄՈՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.1 ՀԱ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշման 5-րդ գլխի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2024 թվականի օգոստոսի 22-ին կայացած աճուրդային կարգով վաճառքի արդյունքները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի սեփականություն հանդիսացող Մեծամոր գյուղում գտնվող գյուղատնտեսական նշանակության 04-064-0101-0036 ծածկագրով 0.1 հա վարելահողի աճուրդային կարգով վաճառքի արդյունքները:

2. Աճուրդում հաղթող ճանաչված քաղաքացի Մամիկոն Հապետի Գաբրիելյանի հետ կնքել գույքի առուվաճառքի պայմանագիր, ներկայացնելով այն նոտարական վավերացման և պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. օգոստոսի 22
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 օգոստոսի 2024 թվականի N 994-Ա

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԵԾԱՄՈՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.2668 ՀԱ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշման 5-րդ գլխի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2024 թվականի օգոստոսի 22-ին կայացած աճուրդային կարգով վաճառքի արդյունքները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի սեփականություն հանդիսացող Մեծամոր գյուղում գտնվող գյուղատնտեսական նշանակության 04-064-0101-0040 ծածկագրով 0.2668 հա վարելահողի աճուրդային կարգով վաճառքի արդյունքները:

2. Աճուրդում հաղթող ճանաչված քաղաքացի Ռուստամ Վազիրի Ավդոյանի հետ կնքել գույքի առուվաճառքի պայմանագիր, ներկայացնելով այն նոտարական վավերացման և պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. օգոստոսի 22

Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 օգոստոսի 2024 թվականի N 993-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38–րդ հոդվածի 1–ին մասի 7–րդ կետով, Արաքս համայնքի «Արաքսի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության պետական գրանցման նպատակով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի բյուջեի 01.1.1–ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900005160727 հաշվեհամարին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. օգոստոսի 22
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 օգոստոսի 2024 թվականի N 992-Ա

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԵԾԱՄՈՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.1816 ՀԱ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշման 5-րդ գլխի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2024 թվականի օգոստոսի 22-ին կայացած աճուրդային կարգով վաճառքի արդյունքները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի սեփականություն հանդիսացող Մեծամոր գյուղում գտնվող գյուղատնտեսական նշանակության 04-064-0007-0062 ծածկագրով 0.1816 հա վարելահողի աճուրդային կարգով վաճառքի արդյունքները:

2. Աճուրդում հաղթող ճանաչված քաղաքացի Արթուր Հարությունի Գևորգյան հետ կնքել գույքի առուվաճառքի պայմանագիր, ներկայացնելով այն նոտարական վավերացման և պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. օգոստոսի 22

Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 օգոստոսի 2024 թվականի N 991-Ա

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԵԾԱՄՈՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.1738 ՀԱ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշման 5-րդ գլխի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2024 թվականի օգոստոսի 22-ին կայացած աճուրդային կարգով վաճառքի արդյունքները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի սեփականություն հանդիսացող Մեծամոր գյուղում գտնվող գյուղատնտեսական նշանակության 04-064-0007-0065 ծածկագրով 0.1738 հա վարելահողի աճուրդային կարգով վաճառքի արդյունքները:

2. Աճուրդում հաղթող ճանաչված քաղաքացի Հովհաննես Սահակի Սահակյանի հետ կնքել գույքի առուվաճառքի պայմանագիր, ներկայացնելով այն նոտարական վավերացման և պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. օգոստոսի 22

Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 օգոստոսի 2024 թվականի N 990-Ա

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԵԾԱՄՈՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.2728 ՀԱ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշման 5-րդ գլխի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2024 թվականի օգոստոսի 22-ին կայացած աճուրդային կարգով վաճառքի արդյունքները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի սեփականություն հանդիսացող Մեծամոր գյուղում գտնվող գյուղատնտեսական նշանակության 04-064-0007-0058 ծածկագրով 0.2728 հա վարելահողի աճուրդային կարգով վաճառքի արդյունքները:

2. Աճուրդում հաղթող ճանաչված քաղաքացի Ռոման Արեգի Մարտիրոսյանի հետ կնքել գույքի առուվաճառքի պայմանագիր, ներկայացնելով այն նոտարական վավերացման և պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. օգոստոսի 22

Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 օգոստոսի 2024 թվականի N 989-Ա

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԵԾԱՄՈՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.1648 ՀԱ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշման 5-րդ գլխի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2024 թվականի օգոստոսի 22-ին կայացած աճուրդային կարգով վաճառքի արդյունքները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի սեփականություն հանդիսացող Մեծամոր գյուղում գտնվող գյուղատնտեսական նշանակության 04-064-0007-0067 ծածկագրով 0.1648 հա վարելահողի աճուրդային կարգով վաճառքի արդյունքները:

2. Աճուրդում հաղթող ճանաչված քաղաքացի Քաջիկ Մկրտչի Բեգլարյանի հետ կնքել գույքի առուվաճառքի պայմանագիր, ներկայացնելով այն նոտարական վավերացման և պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. օգոստոսի 22
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 օգոստոսի 2024 թվականի N 988-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 13-ի N 174-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 12-րդ ենթակետը և Ա/Ձ Սարիբեկ Մկրտչյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլատրել Ա/Ձ Սարիբեկ Մկրտչյանին Արմավիրի մարզի Արաքս համայնք Ջրարբի գյուղի վարչական տարածքում 2024 թվականի3-րդ և 4-րդ եռամսյակներին կազմակերպել և իրացնել հանրային սնունդ:

2. Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին» N 174-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 12-րդ ենթակետի համաձայն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. օգոստոսի 22
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 օգոստոսի 2024 թվականի N 987-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 13-ի N 174-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 12-րդ ենթակետը և Ա/Ձ Համբարձում Կարապետյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլատրել Ա/Ձ Համբարձում Կարապետյանին Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրարբի գյուղի վարչական տարածքում 2024 թվականի 3-րդ եռամսյակին կազմակերպել և իրացնել հանրային սնունդ:

2. Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 174-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 12-րդ ենթակետի համաձայն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. օգոստոսի 22
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 օգոստոսի 2024 թվականի N 986-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղի բնակիչ Աշոտ Մինասյանի 2024 թվականի օգոստոսի 19-ի դիմումը .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Լուծել 2014 թվականի մայիսի 30-ին Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի ղեկավար Վահե Վարդանի Գրիգորյանի և քաղաքացի Աշոտ Միշայի Մինասյանի միջև կնքված 0,5 հա հողամասի վարձակալության պայմանագիրը /N 28102013-04-0084 սեփականության վկայական/:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. օգոստոսի 21
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 օգոստոսի 2024 թվականի N 985-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղի բնակիչ Անդրանիկ Պետրոսյանի 2024 թվականի օգոստոսի 19-ի դիմումը .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Լուծել 2014 թվականի մայիսի 30-ին Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի ղեկավար Վահե Վարդանի Գրիգորյանի և քաղաքացի Անդրանիկ Սանասարի Պետրոսյանի միջև կնքված 4 հա հողամասի վարձակալության պայմանագիրը /N 28102013-04-0052 սեփականության վկայական/:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. օգոստոսի 21
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 օգոստոսի 2024 թվականի N 984-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղի բնակիչ Սարգիս Բայրամյանի 2024 թվականի օգոստոսի 19-ի դիմումը .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Լուծել 2014 թվականի մայիսի 30-ին Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի ղեկավար Վահե Վարդանի Գրիգորյանի և քաղաքացի Սարգիս Գառնիկի Բայրամյանի միջև կնքված 0,5 հա հողամասի վարձակալության պայմանագիրը /N 28102013-04-0039 սեփականության վկայական/:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. օգոստոսի 21
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 օգոստոսի 2024 թվականի N 983-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղի բնակիչ Ռազմիկ Բայրամյանի 2024 թվականի օգոստոսի 19-ի դիմումը .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Լուծել 2014 թվականի մայիսի 30-ին Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի ղեկավար Վահե Վարդանի Գրիգորյանի և քաղաքացի Ռազմիկ Փոլադի Բայրամյանի միջև կնքված 0,75 հա հողամասի վարձակալության պայմանագիրը /N 28102013-04-0055 սեփականության վկայական/:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. օգոստոսի 21
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 օգոստոսի 2024 թվականի N 982-Ա

ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արաքս համայնքի ղեկավարը, քննության առնելով վարչական գործը՝ Արաքս համայնքի Գայ գյուղի վարչական տարածքում գտնվող Արթուր Մանուկյանի կողմից առանց համապատասխան թույլտվության հանրային սննդի կազմակերպման և իրականացնելու վերաբերյալ, պարզեց, որ՝ Արթուր Մանուկյանի կողմից /հաշվառման հասցե՝ /ք.Երևան, Նոր-նորք Վիլնյուսի փ., շ25 բ92 / Արաքս համայնքի Գայ գյուղի վարչական տարածքում գտնվող, Երևանյան փ.,43/1 տարածքում կատարվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտման հատկանիշներ պարունակող արարք, ինչի կապակցությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների խախտման փաստով 2024 թվականի հուլիսի 31-ին հարուցվել է վարչական վարույթ:

Արթուր Մանուկյանը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն, պատշաճ ծանուցված էր վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին /հիմք՝ «Հայփոստ» ՓԲ ընկերության կողմից 2024 թվականի հուլիսի 31-ին տրված LO123808822AM ստացականը և 2024 թվականի օգոստոսի 3-ին առաքանին հանձնված լինելու վերաբերյալ էլեկտրոնային ապացույց/: Վերջինիս առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո որպես վարչական վարույթի մասնակից, 2024 թվականի օգոստոսի 9-ին ժամը 11:30-ին ներկայանալ վարչական վարույթի լսման:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Արթուր Մանուկյանի կողմից Արաքս համայնքի Գայ գյուղի վարչական տարածքում առանց համապատասխան թույլտվության իրականացրել է հանրային սննդի կազմակերպում և իրացում: Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2024 թվականի օգոստոսի 9-ին Արաքսի համայնքապետարանում հրավիրվել է լսում, որին մասնակցելու համար պատշաճ ծանուցվել է Արթուր Մանուկյանը: Վերջինս, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն՝ պատշաճ ծանուցված լինելով վարչական նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին, չի ներկայացել վարչական վարույթի լսմանը, չի ներկայացրել բացատրություններ և միջնորդություններ:

